**Ք.Երևան** **09.02.2026թ.**

**«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողով**

Արամ Խաչատրյանի կողմից, հնարավոր՝ վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում, կարգապահական վարույթ հարուցելու համար լսումներ հրավիրելու մասին

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Հանձնաժողովը, մասնակցությամբ՝ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանի, Արմենակ Ադամյանի, Արմինե Մովսիսյանի, Հարություն Գևորգյանի քննարկելով «Հրազդան Ցեմենտ Քորփորեյշն» ՍՊԸ-ի նախկին աշխատակիցների կողմից (այսուհետ՝ դիմումատուներ) ներկայացված դիմումը Արամ Խաչատրյանի (այսուհետ՝ կառավարիչ) նկատմամբ, պարզեց, որ ներկայացված դիմումի առնչությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետի և նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի սահմանված նորմերով, կառավարիչի նկատմամբ պետք է հարուցվի կարգապահական վարույթ: Կառավարիչի կողմից, վարքագծի վերաբերյալ կանոնների հնարավոր խախտումը պարզելու նպատակով, 14.03.2025թ.-ին նշանակվել է կարգապահական հանձնաժողովի նիստ:

Նշված նիստին ներկա են հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը, հանձնաժողովի անդամներ Լուսինե Սարգսյանը, Արմենակ Ադամյանը, Արմինե Մոսվիսյանը և Հարություն Գևորգյանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը նիստի մասնակիցներին հայտնեց, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.3. հոդվածի և կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 4.2 կետի հիմքով նիստի անցկացման քվորումը ապահովված է և կարող են սկսել դիմումի քննարկումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նիստին չէին ներկայացել բողոք ներկայացնող անձինք, ինչպես նաև սնանկության գործով կառավարիչը, Հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը առաջարկեց դիմումի քննարկման նպատակով սահմանել հետևյալ հերթականությունը, այն է՝ ծանոթանալ բողոք ներկայացնող անձնաց դիմումի բովանդակությանը և ներկայացրած փաստաթղթերին, ծանոթանալ սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացրած դիմումի պատասխանի բովանդակությանը և ներկայացրած փաստաթղթերին և այնուհետև անցնել կարծիքների արտահայտմանը և դրա արդյունքում կայացնել որոշում՝ կարգապահական տույժ կիրառելու կամ կարգապահական վարույթը կարճելու վերաբերյալ: Հանձնաժողովի անդամների կողմից, նշված առաջարկը ընդունվեց միաձայն:

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը ներկայացրեց դիմումը, համաձայն որի դիմումատուները նշել են, որ հանդիսանում են սնանկ ճանաչված «Հրազդան Ցեմենտ Քորփորեյշն» ՍՊԸ-ի նախկին աշխատակիցներ: Վերջիններիս կարծիքով «Հրազդան Ցեմենտ

Քորփորեյշն» ՍՊԸ-ի սնանկության գործընթացն ի սկզբանե, իրենց գնահատմամբ, եղել է ապօրինի, քանի որ գործարանը ունեցել է տասնյակ միլիարդների շրջանառություն, իսկ սնանկության գործով կառավարիչը, ըստ դիմումատուների, համագործակցելով սույն սնանկության գործով պահանջատիրոջ հետ, կազմակերպել է սնանկության շինծու գործընթաց (..): Դիմումատուները նշում են, որ սնանկության գործով կառավարիչը, առանց պարտապան Ընկերության առողջացման ծրագիր քննարկելու, որոշում է կայացրել միանգամից գործարանը լուծարել և միայն գործարանի աշխատակիցների բողոքի ակցիաների շնորհիվ, դիմել է սնանկության դատարան՝ Ընկերության գործունեությունը վերսկսելու միջնորդությամբ: Այնուամենայնիվ, Կազմակերպության գործունեության վերսկսումից հետո էլ, սնանկության կառավարչի կողմից, ըստ դիմումատուների, որևէ գործողություն չի կատարվել (..): Բողոքում բարձրացված երկրորդ հարցը վերաբերում է այն հանգամանքին, որ սնանկության գործով կառավարչի կողմից չի ստուգվել այն հանգամանքը, արդյո՞ք պարտատեր «ԱՊԿ» ՍՊԸ-ի և «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի նկատմամբ Կազմակերպության ունեցած պարտավորությունների գումարը՝ 500 000 000 ՀՀ դրամի և 108 000 000 ՀՀ դրամի չափով փաստացի հասանելի են եղել գործարանին թե ոչ: Դիմումատուները նշում են, որ Ընկերությունը մոտ 110 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի պարտավորություն ունի «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի նկատմամբ, սակայն այդ ամբողջ գումարից գործարանի համար հասանելի է եղել միայն 10 մլն ԱՄՆ դոլարը: Ըստ բողոք ներկայացնող անձանց, սնանկության գործով կառավարիչը պարտավոր էր դիմել իրավապահ մարմիններին՝ նշված հանգամանքը պարզելու համար: (..) Դիմումատուները նշում են, որ սնանկության գործով կառավարիչը ապօրինի է ազատել վերջիններիս աշխատանքից, առանց որևէ ծանուցման, ինչպես նաև չի տրամադրել իրենց հասանելիք վերջնահաշվարկը և արձակուրդային վճարները, ինչը հանդիսանում է օրենքի կոպիտ խախտում: Նշել են, որ աշխատանքից ապօրինի ազատելու փաստը հաստատվել է նաև համապատասխան դատարանի որոշումներով (...): Բողոքում բարձրացված հաջորդ հարցը՝ դա սնանկության գործով կառավարչի կողմից գործարանի աշխատակիցներին երեք ամիս շարունակ աշխատավարձ չվճարելն է, այն դեպքում, երբ Ընկերության հաշվեհամարին առկա է եղել 420 000 000 ՀՀ դրամ, ինչը ամբողջությամբ բավարար է եղել այդ պահին առկա ֆինանսական պարտավորությունների կատարման համար: Դիմումատուները նշում են, որ սնանկության գործով կառավարիչը այդ գումարը բաշխել է ներկայացնելով մեծ վարչական ծախսեր, որոնց հետ աշխատակիցները համաձայն չեն եղել:

Վերը նշված դիմումի համատեքստում, դիմումատուները խնդրել են սնանկության գործով կառավարչի նկատմամբ կիրառել համապատասխան կարգապահական տույժ:

Կառավարիչ՝ Արամ Խաչատրյանի կողմից ներկայացվել է «Հրազդան Ցեմենտ Քորփորեյշն» ՍՊԸ-ի նախկին աշխատակիցների կողմից ներկայացված դիմումի պատասխան, որով վերջինս հայտնել է, որ իր կողմից կատարվել է Ընկերության ֆինանսական վիճակի վերլուծություն, որը ներկայացվել է ՀՀ սնանկության դատարանին և որի արդյունքում նա իրատեսական չի համարել Ընկերության ֆինանսական առողջացումը: 04.07.2024 թ.-ին «Հրազդան Ցեմենտ Քորփորեյշն» ՍՊ ընկերության գլխավոր տնօրենի ժ/պ թիվ 47 գրությամբ տեղեկացել է, որ գործարանի կլինկերի երկաթբետոնյա բունկերում առկա է մոտ 5000 տոննա կլինկեր, որի աղացման դեպքում կառաջանա 5600 տոննա 285 600 000 ՀՀ դրամ գումարին համարժեք ցեմենտ՝ միջինը 1 տոննայի դիմաց 51000 դրամ վաճառքի դեպքում: Այն աղալու

համար անհրաժեշտ է ընդամենը էլեկտրաէներգիայի, գիպսի և դիզվառելիքի մոտ 33 միլիոն դրամի ծախս: Գոյություն ունեցող կլինկերը ձմեռվա ամիսներին պահեստավորվել է դրսում՝ ենթարկվելով կլիմիայական ազդեցության (քարացմանը), որակազրկմանը և հետագայում օգտագործման անհնարինությանը, իսկ կլինկերի քարացման հետևանքով այլևս անհնար կլինի օգտագործել մոտ 2500 տոննա տարողության 2 հատ 2 երկաթբետոնյա բունկերները: Սույն գրությունը ստանալուց հետո, սնանկության գործով կառավարիչը դիմել է ՀՀ սնանկության դատարան՝ Ընկերության գործունեությունը վերսկսելու միջնորդությամբ, որը Դատարանի 11.07.2024 թվականի որոշմամբ բավարարվել է և պարտապանի գործունեությունը վերսկսվել է: Ընկերության գործունեությունը վերսկսելուց հետո սնանկության գործով կառավարիչը Դատարան է ներկայացրել հաշվետվություններ՝ իր կողմից կատարված գործողությունների մասին (...): Ինչ վերաբերում է աշխատավարձերի վճարման ձգձգմանը նշել է, որ դա պայմանավորված է եղել միջանկյալ բաշխման ծրագրի դեմ ներկայացրած առարկություններով, սակայն բաշխման ծրագրի հաստատումից հետո, վերջինիս կողմից բոլոր համապատասխան փոխանցումները անհապաղ կատարվել են (...): Ինչ վերաբերում է Կիմ Արզումանյանին, Արսեն Միրաբյանին, Արմեն Ղազարյանին և Մասիս Նարինյանցին աշխատանքից ազատելու վերաբերյալ դատական ակտերը բողոքարկվել են վերաքննության կարգով, հետևաբար առկա չէ որևէ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, սակայն դիմումատուները վկայակոչել են դրանց գոյությունը (...): Սնանկության վարույթի ընթացքում ներկայացված պահանջների օրինականության վերաբերյալ, նշել է, որ վերջինիս կողմից որևէ ոչ իրավաչափ պարտատիրոջ պահանջ չի հայտնաբերվել, առավել ևս այդ պահանջների իրավաչափության վերաբերյալ գնահատական են տրվել նաև դատական ակտերով: Սնանկության գործով կառավարիչը նշել է նաև, որ դիմումատուների կողմից նույնաբովանդակ բողոքներ են ներկայացվել նաև ՀՀ Սնանկության դատարան, սակայն այդ դիմումները ևս մերժվել են:

Ելնելով նշվածից, կառավարիչը գտնում է, որ «Հրազդան Ցեմենտ Քորփորեյշն» ՍՊԸ-ի նախկին աշխատակիցների կողմից ներկայացված դիմումը՝ իր նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու վերաբերյալ ամբողջությամբ անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ առկա չեն սնանկության գործով կառավարչին կարգապահական տույժի ենթարկելու հիմքերը:

Կարգապահական հանձնաժողովի անդամները ծանոթացան նաև դիմումատուների և սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացրած փաստաթղթերին:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Կարգապահական հանձնաժողովի անդամները ամբողջությամբ ծանոթացան դիմումատուների և կառավարչի կողմից ներկայացված փաստարկներին և ապացույցներին, ուստի Ա.Սարգսյանը հանձնաժողովի անդամներից հետաքրքրվեց, թե արդյո՞ք կարող են լսումները համարվել ավարտված, թե ո՞չ, և ստանալով դրական կարծիք, Արամ Խաչատրյանի կողմից հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում կարգապահական վարույթ հարուցելու համար նշանակված նիստը համարվեց փակված:

Այնուհետև կարգապահական հանձնաժողովի անդամները հայտնեցին իրենց կարծիքները, մասնավորապես՝

- Արմինե Մովսիսյանը հայտնեց կարծիք, որով նշեց, որ սույն գործով կատարվել է կարգապահական խախտում, այն է կառավարչի կողմից թույլ է տրվել անգործություն, որը դրսևորվել է գույքագրման աշխատանքներ պատշաճ չկատարելով: Սնանկության կառավարիչը լիարժեք գույքագրման աշխատանքներ կատարելու դեպքում կարող էր հայտնաբերել գործարանում առկա հումքը, որն անմիջապես պետք է իրացներ և հնարավոր է այս դեպքում, Ընկերությունը չկրեր ֆինանսական կորուստներ և կարողանար ֆինանսապես առողջանալ: Բացի այդ, սնանկության գործով կառավարչի կողմից չի կատարվել Ընկերության ամբողջական ֆինանսական վիճակի վերլուծություն, որը կատարելու դեպքում, վերջինիս կողմից կստուգվեին Ընկերության նկատմամբ ներկայացված պահանջները և մասնավորապես այն հանգամանքը, թե արդյո՞ք ստանձնած վարկային պարտավորությունների արդյունքում այդ գումարները մուտք եղել են գործարանի բանկային հաշվին թե ոչ: Ապօրինի է համարում նաև գործարանի նախկին աշխատակիցների աշխատանքից ազատելը առանց նախնական աշխատանքից ազատելու ծանուցման, ուստի գտնում է, որ սնանկության գործով կառավարչի նկատմամբ պետք է կիրառվի կարգապահական տույժ՝ նախազգուշացման տեսքով:

- Լուսինե Սարգսյանը հայտնեց կարծիք, որով նշեց, որ դիմումատուների կողմից բարձրացված առաջին հարցին, այն է՝ սնանկության գործընթացի կանխամտածված լինելու փաստին գնահատական կարող է տալ միայն քրեական վարույթ իրականացնող մարմինը: Ինչ վերաբերում է դիմումատուների աշխատանքից ազատելու հարցին, ապա գործող օրենսդրության համաձայն նշված իրավական հիմքով աշխատանքից ազատելու համար պարտադիր չէ աշխատակիցներին նախօրոք ծանուցել, առավել ևս այս հարցը քննարկման առարկա է հանդիսանում ընդհանուր իրավասության դատարաններում և այս հարցի վերաբերյալ դեռևս առկա չէ օրինական ուժի մեջ մտած վերջնական եզրափակիչ դատական ակտեր: Աշխատավարձերի վճարման ձգձգումը պայմանավորված է համարում օբյեկտիվ հանգամանքներով, այն է՝ սնանկության գործով կառավարիչը կարող էր այդ փոխանցումները կատարել միայն միջանկյալ բաշխման ծրագրի հաստատումից հետո: Ինչ վերաբերում է պարտատերերի կողմից ներկայացված պահանջների իրավաչափությանը, ապա սնանկության գործի և ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այդ պահանջների իրավաչափությունը վիճարկվել է պարտապանի կողմից, սակայն դատարանը քննության արդյունքում դրանք համարել է օրինական և հիմնավորված: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆինանսական վերլուծություն կատարելու արդյունքում սնանկության գործով կառավարիչը չի ներկայացրել ֆինանսական առողջացման ծրագիր, ինչպես նաև նման ծրագիր չի ներկայացրել և սնանկության վարույթի մասնակից համարվող որևէ անձ ևս գտնում է, որ այս մասով, սնանկության գործով կառավարիչը չի խախտել որևէ օրենսդրական նորմ: Առավել ևս, գործարանի տարածքում հումք հայտնաբերելուն պես, կառավարիչը վերսկսել է Ընկերության գործունեությունը, հետևաբար այս մասով ևս գործարանը չի կրել որևէ ֆինանսկան վնաս: Բացի այդ, բողոքում բարձրացված բոլոր հարցերի վերաբերյալ գնահատական է տրվել նաև ՀՀ

Սնանկության դատարանի կողմից: Այսպիսով, գտնում եմ, որ կառավարչի նկատմամբ չի կարող կիրառվել որևէ կարգապահական տույժ և կարգապահական վարույթը պետք է կարճվի:

- Հարություն Գևորգյանը հայտնեց կարծիք, որով նշեց, որ սնանկության գործով կառավարչի կողմից թույլ տրված որևէ արտառոց խախտում չի տեսնում, սնանկության գործով կառավարիչը ներկայացրել է հիմնավոր փաստարկներ դիմումում բարձրացված բոլոր հարցերի վերաբերյալ, ուստի կարգապահական վարույթը պետք է կարճվի:

- Արմենակ Ադամյանը հայտնեց կարծիք, որով նշեց, որ սնանկության գործով կառավարչի գործողությունները արդեն իսկ գնահատվել են ՀՀ սնանկության դատարանի կողմից, քանի որ դիմումատուները նույնաբովանդակ դիմում են ներկայացրել նաև սնանկության դատարան և Կարգապահական հանձնաժողը այլևս իրավասու չէ վերանայել նշված դատական ակտերը: Այսպիսով, Արամ Խաչատրյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը պետք է կարճվի:

- Հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը հայտնեց կարծիք առ այն, որ դիմումատուները նույնաբովանդակ ենթադրյալ կառավարչի կողմից թույլ տրված խախտումների վերաբերյալ դիմում են ներկայացրել ՀՀ Սնանկության դատարան և խնդրել կառավարչի լիազորությունները այդ հիմքերով՝ վաղաժամկետ դադարեցնել: ՀՀ Սնանկության դատարանը դիմումատուների կողմից ներկայացված դիմումը մերժել է: Դիմումատուները Կարգապահական հանձնաժողովի կողմից հրավիրված որևէ նիստի չեն ներկայացել, որի ընթացքում կարող էին հայտնել նոր փաստարկներ, հետևաբար հանձնաժողովը կարող է քննարկման առարկա դարձնել միայն գրավոր ներկայացրած դիմումը և կից փաստաթղթերը: Գտնում եմ, որ դիմումատուների կողմից ներկայացված դիմումի արդյունքում, սնանկության գործով կառավարչի նկատմամբ չի կարող կիրառվել որևէ կարգապահական տույժ, քանի որ դիմումում ներկայացված ենթադրյալ խախտումների մասին գնահատական է տրվել տարբեր դատական ակտերով, մասնավորապես՝ պահանջների օրինականությունը ստուգվել է պահանջների վերջնական ցուցակ հաստատելու ընթացակարգի շրջանակում, աշխատակիցներին աշխատանքից ազատելու հարցը դեռևս քննարկվում է ընդհանուր իրավասության դատարանների կողմից: Ինչ վերաբերում է աշխատավարձերի վճարման ձգձգմանը, նշվածի վերաբերյալ սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացրած փաստարկը հիմնավոր են, քանի որ սնանկության գործով կառավարիչը չէր կարող այդ փոխանցումները կատարել առանց միջանկյալ բաշխման ծրագրի հաստատման: Վերսկսման վարույթի շրջանակներում կառավարիչը ևս համապատասխան հաշվետվություններ է ներկայացրել ՀՀ սնանկության դատարան, և եթե վերջինս այդ ընթացքում ցուցաբերած լիներ անգործություն, ապա դատարանը իր նախաձեռնությամբ կդադարեցներ սնանկության գործով կառավարչի լիազորությունները: Ուստի գտնում է, որ կառավարչի նկատմամբ չի կարող կիրառվել կարգապահական որևէ տույժ:

Հանձնաժողովի նախագահը քվեարկության դրեց Արամ Խաչատրյանի նկատմամբ կարգապահական տույժ չկիրառելու և կազապահական վարույթը կարճելու վերաբերյալ հարցը, որին կողմ քվերակեցին կարգապահական հանձնաժողովի անդամներից չորսը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կարգապահական հանձնաժողովը ուսումնասիրության առարկա է դարձնում դիմումատուների՝ «Հրազդան Ցեմենտ Քորփորեյշն» ՍՊԸ-ի նախկին աշխատակիցների կողմից, բողոքում բարձրացված միայն հանձնաժողովի իրավասությանը վերապահված հարցերը:

Կարգապահական հանձնաժողովի իրավասությանը վերապահված չէ այն հարցերի քննարկումը, որոնց վերաբերյալ իրավական գնահատական կարող է տալ միայն քրեական վարույթ իրականացնող մարմինները: Այսպես. դիմումատուները նշում են, որ սնանկության գործընթացն ի սկզբանե, իրենց գնահատմամբ, եղել է ապօրինի , քանի որ գործարանը ունեցել է տասնյակ միլիարդների շրջանառություն, իսկ սնանկության գործով կառավարիչը, ըստ դիմումատուների, համագործակցելով սույն սնանկության գործով պահանջատիրոջ հետ, կազմակերպել է սնանկության շինծու գործընթաց: Դիմումատուների կողմից բարձրացված այս հարցը, որը կարող է հիմք հանդիսանալ անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու համար, դուրս է Կարգապահական հանձնաժողովի լիազորություններից և կարող է քննարկան առարկա դառնալ միայն քրեական վարույթի շրջանակներում: Առավել ևս, կարգապահական վարույթի կողմերը, հանձնաժողովի կողմից հրավիրված լսումների ընթացքում հայտնել են, որ առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 287-288-րդ հոդվածներով հարուցված քրեական գործ, որի շրջանակներում կատարվում է նաև սույն սնանկության գործով կանխամտածված սնանկության հատկանիշների հնարավոր առկայության ստուգումը:

Այսպիսով, Կարգապահական հանձնաժողովը քննարկման առարկա է դարձնում դիմումատուների կողմից մատնանշված սնանկության գործով կառավարչի կողմից թույլ տրված ներքոհիշյալ ենթադրյալ խախտումները.

1. Դիմումատուները նշում են, որ սնանկության գործով կառավարիչը, առանց պարտապան Ընկերության առողջացման ծրագիր քննարկելու, որոշում է կայացրել միանգամից գործարանը լուծարել և միայն գործարանի աշխատակիցների բողոքի ակցիաների շնորհիվ, դիմել է սնանկության դատարան՝ Ընկերության գործունեությունը վերսկսելու միջնորդությամբ: Այնուամենայնիվ, Կազմակերպության գործունեության վերսկսումից հետո էլ, սնանկության կառավարչի կողմից, ըստ դիմումատուների, որևէ գործողություն չի կատարվել:
2. Բողոքում բարձրացված երկրորդ հարցը վերաբերում է այն հանգամանքին, որ սնանկության գործով կառավարչի կողմից չի ստուգվել այն հանգամանքը, արդյո՞ք պարտատեր «ԱՊԿ» ՍՊԸ-ի և «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի նկատմամբ Կազմակերպության ունեցած պարտավորությունների գումարը՝ 500 000 000 ՀՀ դրամի և 108 000 000 ՀՀ դրամի չափով փաստացի հասանելի են եղել գործարանին թե ոչ: Դիմումատուները նշում են, որ Ընկերությունը մոտ 110 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի պարտավորություն ունի «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի նկատմամբ, սակայն այդ ամբողջ գումարից գործարանի համար հասանելի է եղել միայն 10 մլն ԱՄՆ դոլարը: Ըստ բողոք ներկայացնող անձանց,

սնանկության գործով կառավարիչը պարտավոր էր դիմել իրավապահ մարմիններին՝ նշված հանգամանքը պարզելու համար:

3. Դիմումատուները նշում են, որ սնանկության գործով կառավարիչը ապօրինի է ազատել վերջիններիս աշխատանքից, առանց որևէ ծանուցման, ինչպես նաև չի տրամադրել իրենց հասանելիք վերջնահաշվարկը և արձակուրդային վճարները:
4. Բողոքում բարձրացված հաջորդ հարցը՝ դա սնանկության գործով կառավարչի կողմից գործարանի աշխատակիցներին երեք ամիս շարունակ աշխատավարձ չվճարելն է, այն դեպքում, երբ Ընկերության հաշվեհամարին առկա է եղել 420 000 000 ՀՀ դրամ, ինչը ամբողջությամբ բավարար է եղել այդ պահին առկա ֆինանսական պարտավորությունների կատարման համար: Դիմումատուները նշում են, որ սնանկության գործով կառավարիչը այդ գումարը բաշխել է ներկայացնելով մեծ վարչական ծախսեր, որոնց հետ աշխատակիցները համաձայն չեն եղել:

Ըստ դիմումատուի կողմից ներկայացված դիմումի և առարկության, հրավիրված նիստերի ընթացքում ներկայացված բացատրությունների, հայտարարությունների, հարցերի և հարցերի պատասխանների պարզվեց.

Սույն կարգապահական վարույթի ընթացքում հաստատված է համարվում այն հանգամանքը, որ «Ակտիվների և պասիվների կառավարման կենտրոն» ՍՊ ընկերության տնօրեն Ղուկաս Տեպանոսյանը 03.05.2022 թվականին դիմում է ներկայացրել ՀՀ սնանկության դատարան՝ «Հրազդան Ցեմենտ Քորփորեյշն» ՍՊ ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջի մասին, որը Դատարանը 30.11.2022 թվականին բավարարել է և «Հրազդան Ցեմենտ Քորփորեյշն» ՍՊ ընկերությունը ճանաչվել է սնանկ: Դատարանի 06.12.2022 թվականի որոշմամբ Ընկերության սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Արամ Խաչատրյանը: ՀՀ Սնանկության դատարանի 23.04.2024 թվականի որոշմամբ սկսվել է «Հրազդան Ցեմենտ Քորփորեյշն» ՍՊ ընկերության լուծարման վարույթ և կազմակերպության գործունեությունը կասեցվել է: 23.02.2024 թվականի որոշմամբ հաստատվել է պահանջների վերջնական ցուցակը հետևյալ հերթականությամբ.

1. «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ - 16 412 232 462.4 ՀՀ դրամ, ապահովված պահանջ:
2. «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ - 1 079 156.67 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ապահովված պահանջ:
3. «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ - 9 348 399.36 Եվրոյին համարժեք ՀՀ դրամ, ապահովված պահանջ:
4. «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ - 22 044 504 578.8 ՀՀ դրամ, ապահովված պահանջ:
5. ՀՀ պետական եկամուտների կոմիտե - 17 776 140 ՀՀ դրամ, չապահովված պահանջ, «գ» հերթ:
6. «ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՍԻՎՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ- 1 000 000 ՀՀ դրամ չապահովված պահանջ, «դ» հերթ:
7. ՀՀ պետական եկամուտների կոմիտե - 683 518 ՀՀ դրամ չապահովված պահանջ, «զ» հերթ:
8. ՀՀ պետական եկամուտների կոմիտե - 240 ՀՀ դրամ, չապահովված պահանջ, «է» հերթ:

9. «ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՍԻՎՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն - 555 000 000 ՀՀ դրամ, չապահովված պահանջ «Է» հերթ:

09.07.2024 թվականին սնանկության գործով կառավարչի կողմից ՀՀ սնանկության դատարան է ներկայացվել պարտապանի գործունեությունը վերսկսելու վերաբերյալ միջնորդություն, որը դատարանի կողմից բավարարվել է:

**1.** Դիմումատուների կողմից ներկայացված բողոքում բարձրացված առաջին հարցը վերաբերում էր սնանկության կառավարչի կողմից պարտապան ընկերության ֆինանսական առողջացման ծրագիր չներկայացնելուն, ինչպես նաև Դատարանի որոշմամբ Ընկերության գործունեության վերսկսումից հետո էլ կառավարչի կողմից թույլ տրված անգործությանը: Սնանկության գործով կառավարիչը իր դիրքորոշմամբ սույն հարցի վերաբերյալ հայտնեց, որ իր կողմից կատարվել է Ընկերության ֆինանսական վիճակի վերլուծություն, որը ներկայացվել է ՀՀ սնանկության դատարանին և որի արդյունքում նա իրատեսական չի համարել Ընկերության ֆինանսական առողջացումը: 04.07.2024 թ.-ին «Հրազդան Ցեմենտ Քորփորեյշն» ՍՊ ընկերության գլխավոր տնօրենի ժ/պ թիվ 47 գրությամբ տեղեկացել է, որ գործարանի կլինկերի երկաթբետոնյա բունկերում առկա է մոտ 5000 տոննա կլինկեր, որի աղացման դեպքում կառաջանա 5600 տոննա 285 600 000 ՀՀ դրամ գումարին համարժեք ցեմենտ՝ միջինը 1 տոննայի դիմաց 51000 դրամ վաճառքի դեպքում: Այն աղալու համար անհրաժեշտ է ընդամենը էլեկտրաէներգիայի, գիպսի և դիզվառելիքի մոտ 33 միլիոն դրամի ծախս: Գոյություն ունեցող կլինկերը ձմեռվա ամիսներին պահեստավորվել է դրսում՝ ենթարկվելով կլիմայական ազդեցության /քարացմանը/, որակազրկմանը և հետագայում օգտագործման անհնարինությանը, իսկ կլինկերի քարացման հետևանքով այլևս անհնար կլինի օգտագործել մոտ 2500 տոննա տարողության 2 հատ 2 երկաթբետոնյա բունկերները: Սույն գրությունը ստանալուց հետո, սնանկության գործով կառավարիչը դիմել է ՀՀ սնանկության դատարան՝ Ընկերության գործունեությունը վերսկսելու միջնորդությամբ, որը Դատարանի 11.07.2024 թվականի որոշմամբ բավարարվել է և պարտապանի գործունեությունը վերսկսվել է: Ընկերության գործունեությունը վերսկսելուց հետո սնանկության գործով կառավարիչը Դատարան է ներկայացրել հաշվետվություններ՝ իր կողմից կատարված գործողությունների մասին 22.07.2024 թվականին, 08.08.2024 թվականին, 12.08.2024 թվականին, 19.08.2024 թվականին, 13.09.2024 թվականին, 23.09.2024 թվականին, 25.09.2024 թվականին: Նշված փաստը, ինչպես նաև սնանկության գործով կառավարչի կողմից Ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ վերլուծություն կատարելու փաստը արձանագրվել է ՀՀ Սնանկության դատարանի կողմից 02.10.2024 թվականի կայացված որոշմամբ, որով մերժվել է «ԱՄԻՕ բանկ» ՓԲ ընկերության կողմից դատարան ներկայացված միջնորդությունը՝ սնանկության գործով կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

Այսպիսով, սնանկության գործով կառավարչի կողմից ֆինանսական վերլուծություն կատարելու և Ընկերության գործունեության վերսկսումից հետո կատարված գործողությունների մասին հաշվետվություններ ներկայացնելու հարցերին արդեն իսկ գնահատական է տրվել ՀՀ Սնանկության դատարանի 02.10.2024 թվականի որոշմամբ:

Համաձայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ 1.ֆինանսական առողջացման ծրագիր կարող են ներկայացնել **պարտապանը, կառավարիչը,**

**ապահովված պահանջների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերը, չապահովված պահանջների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերը**, ինչպես նաև **պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալի առնվազն 1/3-ին տիրապետող անձինք:**

Սույն սնանկության գործով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սուբյեկտներից որևէ մեկը Ընկերության ֆինանսական առողջացման ծրագիր չի ներկայացրել, իսկ սնանկության գործով կառավարիչը, կատարելով Ընկերության ֆինանսական վիճակի վերլուծություն, իրատեսական չի համարել Ընկերության ֆինանսական առողջացումը:

Համաձայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.4-րդ հոդվածի 5-րդ մասի՝ կարգապահական վարույթ հարուցող մարմինը չի հարուցում կառավարչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթ, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե՝ **դատարանը սնանկության գործի շրջանակում, անդրադառնալով կարգապահական պատասխանատվության կիրառման հիմք հանդիսացող հանգամանքին, հաստատել է դրա առկայությունը կամ բացակայությունը**.

Այսպիսով, ՀՀ սնանկության դատարանը, անդրադառնալով, սնանկության գործով կառավարչի կողմից Ընկերության ֆինանսական վիճակի վերլուծություն կատարելու և Ընկերության գործունեության վերսկսումից հետո թույլ տրված ենթադրյալ անգործությանը տվել է իրավական գնահատական և հաստատել այն հանգամանքը, որ սնանկության գործով կառավարիչը դատարան է ներկայացրել Ընկերության ֆինանսական վիճակի վերլուծություն, ինչպես նաև Ընկերության գործունեության վերսկսումից հետո 22.07.2024 թվականին, 08.08.2024 թվականին, 12.08.2024 թվականին, 19.08.2024 թվականին, 13.09.2024 թվականին, 23.09.2024 թվականին, 25.09.2024 թվականին դատարան է ներկայացրել իր կողմից կատարված գործողությունների մասին հաշվետվություններ:

**2.** Բողոքում բարձրացված երկրորդ հարցը վերաբերում է այն հանգամանքին, որ սնանկության գործով կառավարչի կողմից չեն ստուգվել պարտատերերի կողմից ներկայացված պահանջների հիմքերը, մասնավորապես արդյո՞ք պարտատեր «ԱՊԿ» ՍՊԸ-ի և «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դրամական պահանջները, նախկինում փոխանցել են պարտապան Ընկերությանը թե ոչ:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն սույն հոդվածի 2.1-մասով նախատեսված ժամկետում ներկայացրած բոլոր պահանջները կառավարիչն ընդգրկում է պարտատերերի պահանջների նախնական ցուցակում՝ սույն օրենքի 82-րդ հոդվածով սահմանված պահանջների բավարարման հերթականությանը համապատասխան:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետից հետո՝ եռօրյա ժամկետում, իսկ դատարանի կողմից թերությունների վերացման համար ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ այդ ժամկետից հետո՝ եռօրյա ժամկետում, պահանջների նախնական ցուցակը կառավարիչը ներկայացնում է դատարան, պարտապանին, առավել մեծ պահանջներ ունեցող 5 պարտատերերին և հրապարակում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում: Եթե հրապարակումից հետո՝ **յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը նախնական ցուցակի դեմ գրավոր առարկություններ չեն ներկայացնում**

**դատարան, ապա դատավորը եռօրյա ժամկետում առանց նիստ հրավիրելու որոշում է կայացնում պահանջների ցուցակը հաստատելու մասին (վերջնական ցուցակ):**

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն (...) **Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը կարող է բողոքարկվել:**

Այսպիսով, սնանկության վարույթում օրենսդիրը, սահմանել է պարտատերերի կողմից պահանջների ներկայացման որոշակի կառուցակարգ: Մասնավորապես՝ օրենսդրորեն ամրագրվել է, որ սնանկության մասին հայտարարությունից հետո մեկամսյա ժամկետում պարտատերերն իրենց պահանջները դատարան ներկայացնելիս պարտավոր են նշել այն պարտավորության մասին, որից բխում է պահանջը, դրա կատարման ժամկետը, ինչպես նաև պահանջը հիմնավորող հանգամանքները: Միաժամանակ օրենսդիրը պարտավորեցրել է դատարանին անկախ պահանջի (պահանջների) նկատմամբ առարկության ներկայացումից **քննության առնել դատարան ներկայացրած յուրաքանչյուր պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը, որից հետո միայն որոշում կայացնել պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին**: Նման օրենսդրական կարգավորումն ինքնանպատակ չէ և նպատակ ունի բացառելու սնանկության վարույթում չհիմնավորված պահանջների ընդգրկումը, քանի որ այդպիսի պահանջների ընդգրկումը կհանգեցնի ինչպես այն պարտատերերի իրավունքների և օրինական շահերի խախտմանը, որոնց պահանջները հիմնավորված են, այնպես էլ՝ պարտապանի և նրա հիմնադիրների (մասնակիցների) իրավունքների և օրինական շահերի խախտմանը:

«Հրազդան ցեմենտ քորփորեյշն» ՍՊԸ-ի սնանկության գործով պարտատերերի պահանջների նախնական ցուցակը սնանկության գործով կառավարիչը Դատարան է ներկայացրել 2023 թվականի հունվարի 31-ին: 2023 թվականի փետրվարի 08-ին «Հրազդան ցեմենտ քորփորեյշն» ՍՊԸ ներկայացուցիչ Վ.Գաբրիելյանը ՀՀ սնանկության դատարան է ներկայացրել առարկություն՝ «Հրազդան ցեմենտ քորփորեյշն» ՍՊԸ պարտատերերի նախնական ցուցակի դեմ: Առարկությունները վերաբերել են պարտատեր «ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՍԻՎՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պահանջի չափին:

ՀՀ Սնանկության դատարանը 23.02.2023 թվականի որոշմամբ հաստատել է սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացված պահանջների նախնական ցուցակը: Անդրադառնալով, պարտապանի կողմից ներկայացված առարկություններին Դատարանը արձանագրել է, որ «ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՍԻՎՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի պահանջը բխում է կողմերի միջև կնքված փոխառության պայմանագրով ստանձնած պարտավորություններից, հիմնավոր է և ենթակա է գրանցման «ՀՐԱԶԴԱՆ ՑԵՄԵՆՏ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտատերերի պահանջների վերջնական ցուցակում: Նշված որոշումը բողոքարկվել է պարտապանի կողմից ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարան: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.05.2023թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է: ՀՀ սնանկության դատարանի 23.02.2023 թվականի թիվ ՍՆԴ/1288/04/22 պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու և պարտատերերի առաջին ժողով նշանակելու մասին որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ: ՀՀ վճռաբեկ դատարանի 29.09.2023թ. որոշմամբ թիվ ՍՆԴ/1288/04/22 սնանկության գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.05.2023 թվականի որոշման դեմ «Հրազդան ցեմենտ քորփորեյշն» ՍՊԸ-ի բերած վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության:

Այսպիսով, դիմումատուների կողմից բարձրացված հարցը արդեն իսկ ստուգման առարկա է դարձել ՀՀ Սնանկության դատարանի կողմից սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակ հաստատելու ընթացակարգի շրջանակներում և թե՛ ՀՀ Սնանկության դատարանը, թե՛ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, ստուգելով սնանկության գործով ներկայացված պահանջների օրինականությունը, հաստատել են սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացված նախնական ցուցակը:

**3.** Դիմումատուները նշում են, որ սնանկության գործով կառավարիչը ապօրինի է ազատել վերջիններիս աշխատանքից, առանց որևէ ծանուցման, ինչպես նաև չի տրամադրել իրենց հասանելիք վերջնահաշվարկը և արձակուրդային վճարները:

Վերը նշված հարցը դիմումատուները բարձրացրել են նաև ՀՀ Սնանկության դատարան ներկայացված դիմումով, որով խնդրել են սնանկության գործով կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել այն հիմքով, որ նա գործարանի մի շարք աշխատակիցների «անօրինական» է ազատել աշխատանքից: 14.05.2025 թ. ՀՀ սնանկության դատարանի որոշմամբ մերժվել է Կիմ Արզումանյանի, Արմեն Ղազարյանի և Մասիս Նարինյանցի կողմից դատարան ներկայացված միջնորդությունը «Հրազդան Ցեմենտ Քորփորեյշն» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ: Նշված որոշմամբ Դատարանը անդրադարձել է դիմումատուների կողմից բարձրացված իրենց Ընկերությունից ապօրինի աշխատանքից ազատելու և վերջնահաշվարկներ չտրամադրելու հարցերին: Դիմումատուները դատարան ներկայացված միջնորդության փաստական հիմքում դրել են այն հանգամանքը, որ դատարանների կողմից կայացվել են որոշումներ, որոնցով հաստատվում է իրենց ապօրինի աշխատանքից ազատելու փաստը, մինչդեռ սնանկության գործով կառավարչի կողմից դատարան ներկայացված դիրքորոշմամբ նշվել է, որ վերը նշված դատական ակտերը բողոքարկվել են վերաքննության կարգով և առկա չէ որևէ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ: Դատարան ներկայացված դիրքորոշմամբ սնանկության կառավարիչը նշել է, որ 4 աշխատակցի՝ Արսեն Միրաբյանին, Արմեն Ղազարյանին, Կիմ Արզումանյանին, Մասիս Նարինյանցին ազատել է աշխատանքից աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հիմքով: ՀՀ սնանկության դատարանը արձանագրել է, որ միջնորդողները չեն նշել, թե **իրենց աշխատանքից ազատելու գործառույթը սնանկության գործով կառավարչի՝ օրենքով նշած որ լիազորությունների շարքին է դասվում, ինչպես նաև չեն ապացուցել, որ ենթադրյալ ապօրինի աշխատանքից ազատելով, խախտվել է արդյո՞ք սնանկության վարույթով որևէ մասնակցի իրավունքը կամ օրինական շահը, կամ այդ խախտումը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել նման մասնակցի պատճառված վնասի:**

Այսպիսով, ՀՀ սնանկության դատարանը, անդրադառնալով, սնանկության գործով կառավարչի պարտապան ընկերության աշխատակիցներին աշխատանքից ազատելու օրինականության հարցին, արձանագրել է, որ սնանկության գործով կառավարչի կողմից աշխատանքից ազատելու օրինականության վերաբերյալ դիրքորոշում կարող է հայտնվել միայն ընդհանուր իրավասության դատարանների կողմից վերջնական դատական ակտերով, ինչով պայմանավորված ՀՀ Սնանկության դատարանը չի գտել սնանկության գործով կառավարչի գործողություններում որևէ խախտում: Հետևաբար, Կարգապահական հանձնաժողովը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.4-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն այլևս իրավասու չէ գնահատական տալ դիմումատուների կողմից բարձրացված այս հարցին:

**4.** Բողոքում բարձրացված հաջորդ հարցը՝ դա սնանկության գործով կառավարչի կողմից գործարանի աշխատակիցներին երեք ամիս շարունակ աշխատավարձ չվճարելն է: Այս հարցի վերաբերյալ իր դիրքորոշումն է ներկայացրել սնանկության կառավարիչը, որով հայտնել է, որ աշխատավարձերի վճարումը նախատեսվել է սնանկության գործով կառավարչի կողմից և ներառվել է իր կողմից ՀՀ սնանկության դատարան ներկայացված միջանկյալ բաշխման ծրագրով: ՀՀ սնանկության դատարանի կողմից հաստատված բաշխման ծրագրի համաձայն բաշխվել են պարտապան ընկերության աշխատակիցների 2024 թվականի մարտ և ապրիլ ամիսների աշխատավարձերը, ինչպես նաև նույն ժամանակահատվածում առաջացած եկամտային հարկի, սոցիալական վճարի և դրոշմանիշային վճարի գումարները: «Հրազդան Ցեմենտ Քորփորեյշն» ՍՊԸ-ի աշխատակիցների կողմից 2024 թ. մայիս և հունիս ամիսների աշխատավարձերի վերաբերյալ պահանջները սնանկության գործով կառավարչի կողմից 30.07.2024 թ. հրապարակվել են azdarar.am կայքում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82 հոդվածի «ա» հերթում, այնուհետև իր կողմից 26.08.2024 թ. էլեկտրոնային եղանակով ուղարկված դիմումի հիման վրա նույն օրը ուղղում է կատարվել վերը նշված հայտարարություններում և հրապարակվել է հրապարակային ծանուցումների վերաբերյալ www.azdarar.am կայքում, ինչպես նաև դրա վերաբերյալ 28.08.2024 թ. համապատասխան գրություն է ուղարկվել ՀՀ սնանկության դատարան՝ կցելով հայտարարության տեքստը, հետևաբար օրենքի ուժով յուրաքանչյուր պարտատեր այդ օրվանից 26.08.2024 թ.-ից ծանուցված է համարվել տվյալ տեղեկատվության վերաբերյալ, սակայն նշված բաշխման ծրագրի դեմ դեմ 10.09.2024 թ. ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացվել է առարկություն, իսկ սնանկության կառավարիչը ներկայացրել է առարկության պատասխան: Դատարանի կողմից միջանկյալ բաշխման ծրագրի հաստատումից հետո միայն սնանկության գործով կառավարիչը կարող էր իրականացնել միջանկյալ բաշխման ծրագրով նախատեսված գումարների, այդ թվում՝ աշխատավարձերի փոխանցումը պարտատերերին:

Այսպիսով, վարույթի ընթացքում հիմնավորվել է այն հանգամանքը, որ աշխատավարձերի վճարման ձգձգումը պայմանավորված է եղել այլ պարտատերերի կողմից ներկայացված առարկություններով, որոնք քննության առարկա են դարձել ՀՀ սնանկության դատարանի կողմից, ուստի սնանկության կառավարիչը ստիպված է եղել սպասել վերջնական դատական ակտին, որից հետո միայն կատարել համապատասխան փոխանցումները:

Ելնելով սույն եզրակացության մեջ նշված փաստարկներից և իրավական հիմնավորումներից, կարգապահական հանձնաժողովը եկել է այն եզրակացության, որ կառավարիչ Արամ Խաչատրյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

**Ա.Սարգսյան**

**Լ.Սարգսյան**

**Հ.Գևորգյան**

**Ա.Ադամյան**